

ՀԻՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Առաքինութիւններէն մի քանի հատը առանձնական են, որոնք իրենց գործողներուն միայն կը մխիթարեն օրինակ՝ աղօթքն ու ծնրադրութիւնը, Աստուծոյ եւ աստուածայիններու մասին բարեպաշտ հսկումը, մեղքերու գղղումը, ծոմապահութիւնն ու պահեցողութիւնը եւ ապաշխարութեան այլ գործերը: Ասոնք կրօնքին կը վերաբերին: Իսկ մի քանի հատն ալ ընկերային են, որոնք միեւնոյն ժամանակ իրենց գործողներուն եւ ընդունողներուն կը մխիթարեն, ինչպէս կարօտեալներու ողորմիլը, գերիներ ազատելը, հիւանդներու ծառայելը, տրտմածները մխիթարելը, բոլորին բարիք գործելը: Ասոնք ալ բարոյականութեան կը վերաբերին: Արդարեւ ասոնք երկուքն ալ գովելի են, բարի Աստուածահաճոյ եւ վարձքի արժանի, բայց եթէ ընկերային առաքինութիւնները առանց սնափառութեան գործեն, աւելի գովելի են ու աւելի վարձքիարժանի: Որովհետեւ ոչ թէ գործողին օգուտ ու շահ կը բերեն, այլեւ ընկերոջ, եւ նոյնիսկ իր գործերու օրինակներով գործողը շատերուն կը մղէ ուրիշներուն բարեբարբերու:

Անանկ է հիւրասիրութիւնը, որ ոչ միայն հիւրընկալին կ'ուրախացնէ, այլեւ հիւրին եւ իր մէջ կը ստեղծէ նաեւ առաքինութեան բազում այլ մասեր՝ մարդասիրութիւն ...

Շարունակելի

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԳԵԻԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԷՆ


ՈԳԻՆԵՐՈՒ ՀՄԱՅՈՒԹԻՒՆ

Քրիստոսի ժամանակ շատեր կը գբաղէին այդ ծածուկ գործով, կախարդութիւնը գործածելով իբրեւ արհեստ: Անոնք կը սիրէին կրկնել, թէ Սողոմոնն է իրենց ուսուցիչը, որպէս թէ՛ անոնք գիրքերով սորված են: Բայց իրականին մէջ Սողոմոնը որեւէ կապ չունի անոր հետ, ճիշդ ինչպէս Մովսէսի անունը կը կրեն իրեն հետ որեւէ կապ չունեցող կախարդութեան «ծ-րդ եւ 7-րդ գիրքերը»: Ասոնց մէջ ամփոփուած են մարդոց եւ կենդանիներու գանազան հիւանդութիւններու բուժման դեղատոմսեր, որոնք ուժ կ'ունենան միայն այն պարագային՝ երբ Աստուծոյ անունը կու տան, կամ Կոյս Մարիամը կամ ոգիները կը կանչեն: Գիրքին առաջին մասը կը կոչուի «Սեւ ագուաւ», իսկ վերջինը՝ «Ճշմարիտ կրակէ վիշապ, կամ իշխանութիւն երկինքի ու դժոխքի ոգիներուն վրայ»:


Մեռելահարցուկներուն մասին նաեւ աւելցնեմ, որ անոնք սովորաբար հանգուցեալներու հոգիները կը կոչեն՝ անոնց շիրիմներուն վրայ: Եսայիի 65.3-4 համարներուն մէջ կ'ըսուի. «Իմ ձեռքս երկնցուցի այնպիսի ժողովուրդի մը՝ որ միշտ կը բարկացնէ զիս. պարտէզներուն մէջ կը գոհեն, եւ աղիւսներու վրայ խունկ կը ծխեն, գերեզմաններու վրայ կը նստին, եւ գիշերները առանձին տեղեր կ'անցնեն:

ՀԱՍՅԷ.

ճՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax: 01-258300 - E-mail: jerak@live.com



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԲԵՌՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴԱՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ՝ 15 ՅՈՒՆԻՈՒՄԱՐ, 2012 ԹԻՒ 3

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ (2.1-11)

Ա. ԶԿՈՒ ԾՆՆԴԵԱՆ

Յիսուսի Գալիլիա հասնելուն երրորդ օրը հարսանիք մը կար Կանա քաղաքին մէջ, եւ Յիսուսի մայրը հոն էր: Յիսուս եւ իր աշակերտներն ալ հրաւիրուած էին հարսանիքին: Երբ գինին պակսեցաւ, Յիսուսի մայրը իրեն ըսաւ. - «Գինի չունին»:

«Մայր, մեզի ի՞նչ», - պատասխանեց Յիսուս, - «Իմ ժամանակս տակաւին չէ հասած»:

Սակայն իր մայրը ըսաւ սպասաւորներուն. - «Ինչ որ ըսէ ձեզի՝ կատարեցէ՛ք»: Հրեաներու ծիսական մաքրութեան սովորութեան համաձայն, հոն քարէ վեց կարասներ կային, որոնցմէ իւրաքանչիւրը ութսունէն հարիւր լիթր կ'առնէր: Յիսուս ըսաւ սպասաւորներուն. - «Կարասները ջուրով լեցուցէ՛ք»:

Եւ սպասաւորները լեցուցին մինչեւ բերան: Յետոյ ըսաւ անոնց. - «Հիմա առէ՛ք եւ սեղանապետին տարէ՛ք»:

Անոնք ալ տարին: Սեղանապետը համտեսեց գինիի փոխուած ջուրը, բայց չգիտցաւ՝ թէ ուրկէ էր. թէեւ սպասաւորները, որոնք ջուրը լեցուցած էին՝ գիտէին: Այն ատեն սեղանապետը փեսային ըսաւ. - «Ամէն մարդ նախ ընտիր գինին կը հրամցնէ, իսկ երբ գինովնան՝ այն ատեն հասարակը, մինչ դուն ընտիր գինին պահեր ես մինչեւ հիմա»:

Յիսուս իր այս առաջին հրաշքը կատարեց Գալիլիայի Կանա քաղաքին մէջ: Հոն ան իր փառքը յայտնեց, եւ աշակերտները հաւատացին իրեն:

ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆ

Ս. Ծննդեան ութերորդ օրը Յիսուս Գրիստոսի անուանակոչուած թեան տօնն է:

Համաձայն Գաբրիէլ հրեշտակապետի պատգամին, որ տեղի ունեցաւ Աւետումին օրը, Յովսէփ եւ Մարիամ նորածին Յիսուսը տարին տաճար, հրեական օրէնքի համաձայն, թլփատել տուին եւ անուանաւ յիսուսը:

Յիսուս անունը կը նշանակէ Փրկիչ, իսկ Գրիստոս՝ Օծեալ Տէր: Յիսուսի տրուած միւս անուններն են՝ Մեսիա, Գրիստոս, Էմմանուէլ, Փրկիչ, Մեծ Վարդապետ: Աւետարաններուն մէջ կը գործածուի նաեւ «Մարդու Որդին»:

Հրեաներու մօտ սովորութիւնն էր արու գաւակները թլփատելը, որպէսզի անոնք ստանան Աբրահամեան սերունդի եւ աստուածային ուխտի կնիքը: Նոյն միջոցին կը կատարուէր, նաեւ անոնց անուանակոչումը՝ անուն դնելը:

Թլփատումը՝ հրեաներու համար Եհովայի եւ Աբրահամի միջեւ կնքուած «դաշինքի» յիշատակն է:

Գրիստոնէութեան տարածման սկզբնական շրջանին, նորադարձ հրեայ քրիստոնեաները կը շարունակէին պահել այդ սովորութիւնը, բայց Պօղոս առաքեալ արգիլեց:

Յիսուսի թլփատութիւնը, ոչ թէ անհրաժեշտութեան, այլ՝ հաստատուած օրէնքը յարգելու եւ կատարելու համար էր:

Հայ եկեղեցին, Անուանակոչութեան տօնը կը կատարէ Յունուար 13-ին՝ որպէս անշարժ տօն, իսկ կաթողիկէ եկեղեցին՝ Յունուար 1-ին:

Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏ

Յովհաննէս Կարապետը՝ Յիսուս Գրիստոսի գալուստը վկայած մարգարէներէն վերջինն է, որ յետագային նաեւ մկրտեց զԱյն՝ այնուհետեւ կոչուելով «Յովհաննէս Մկրտիչ»: Ան մեծ համբաւ ունէր իր ապաշխարութեամբ, քարոզչութեամբ եւ իրեն հետեւորդներու մկրտութեամբ: Իր հանդէպ յարգանքը այնքան մեծ եղած է, որ իր հետեւորդները հարց կու տային թէ արդեօք ի՞նքն էր Գրիստոսը:

Հայաստանեայց առաքելական եկեղեցին Յովհաննէս Կարապետի յիշատակը կը նշէ չորս առիթներով, որոնցմէ երկուքն են՝ ծնունդը եւ զրլխատումը:

Սրբոյն Յովհաննու Կարապետի ծննդեան տօնը կը զուգարդիպի Շաբաթ՝ 14 Յունուար, 2012-ին: Այս առիթով կը շնորհակարտեմք բոլոր Յովհաննէս եւ Կարապետ անունը կրող մեր եկեղեցւոյ գաւակներուն անուանակոչութեան տօնը մաղթելով բոլորին արեւշատութիւն:

ՆԵՐԵԼԻ ՄԵՂՔԵՐԸ ԻՆՉՊԷՍ ԿԸ ՔԱԿՈՒԻՆ

Երբ մարդ կը խոստովանի իր գործած մեղքերը եւ սրտանց կ'ապաշխարէ, անգամ մըն ալ չմեղանչելու որոշումով՝ կ'արժանանայ մեղքի քուտնութեան եւ յանգանքի թողութեան:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐՉՈՒՐԴՆԵՐԸ

ՍՈՒՐԲ ԽՈՐՉՈՒՐԴԻՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Ի՞նչ է հաւատացեալ ժողովուրդին պարտքը Եկեղեցւոյ մէջ, պատարագի պահուն:

Դժբախտաբար մեր եկեղեցւոյ մէջ, հակառակ մեր ժողովուրդի բարեպաշտութեան, այս պայմանները չեն յարգուիր: Դուրս ելլել մտնել, պնակներ պտտցնել, աղմուկ՝ կանանց մէջ մանաւանդ, կը խանգարեն արարողութեան մեծ վայելչութիւնը:

Մենք շատ ուշադրութիւն պիտի ընենք եւ պիտի աշխատինք, որ այս սգեղ իրողութիւնները տեղի չունենան եկեղեցւոյ մէջ:

ՊՍԱԿԻ ԱՍՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Ինչո՞ւ հաւաք խորհուրդ է անուանուիլ:

Որովհետեւ այր եւ կնոջ միաւորութիւնը կ'օրհնուի եւ կը կնքուի Աստուծոյ անունով: Աստուծոյ միացուցածը մարդ թող չզատէ (Մատթ. ԺԺ. 5-6):

Պօղոս Առաքեալ այր եւ կնոջ ամուսնական միաւորութիւնը կը նմանցընէ Գրիստոսի իր Եկեղեցւոյ հետ միութեան:

Եւ իրապէս, մարդկային ցեղի մաքուր եւ առողջ աճումը, նաեւ Գրիստոսի Եկեղեցւոյն բարգաւաճումն ու պայծառութիւնը, արդիւնք են օրինաւոր ամուսնութեանց: Եւ որովհետեւ Գրիստոս եւ իր եկեղեցին նոյնացած են իբրեւ մի մարմին, հարկ է որ ամուսնացողներ, իբրեւ գործադրիչներ աստուածային պատուէրին (աճեցէ՛ք եւ բազմացարու՛ք) կատարելապէս գիտակ եւ հաւատարիմ ըլլան իրենց միաւորման ուխտին եւ նպատակին...

Շարունակելի

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ԱՂՈԹՔ ԲԱՐԻ ՕՐՈՒԱՆ ՄԸ ՀԱՄԱՐ

Բարի օր մը պարգեւէ՛ ինձի, ո՛վ ամենաբարի Տէր: Ըրէ՛ այնպէս, որ սիրտս քու սիրովդ եւ քաղցրութեամբդ լեցուի եւ ես ալ քու բարութեանդ ցոլացումը ըլլամ շրջապատիս մէջ: Ժխտական կեցածքներու դիմաց դրական ներկայութիւն ըլլամ, խեղճն ու տկարը ոտնակոխ չընեմ, ցաւին ու տագնապին անտարբեր չմնամ, այլ՝ անհանդուրժողութեան դիմաց լայն բանամ սիրտս, նախանձին ու ատելութեան դիմաց սիրոյդ վահանովը գրահուիմ ու պաշտպանուիմ, տրտունջներու դառնութեան դիմաց քու քաղցր ցօղը ըլլամ, գրպարտութեան եւ չարութեան ալիքներուն դիմաց քու ցուցաբերած անսահման հասկացողութեանդ, համբերութեանդ եւ ներողամտութեանդ փոքրիկ մէկ կաթիլը դառնամ եւ ընդհակառակը՝ անժպիտ մարդոց ժպիտ մը բերեմ, անուրախ մարդոց սիրտը ուրախացնեմ, յուսահատ մարդոց յաւիտեական կեանքի յոյսը տամ, անսէր մարդոց սէր բաշխեմ, սառնացեալ սիրտերը սիրովդ ջերմացնեմ եւ քու սուրբ անունովդ կնքեմ եւ քեզի համար կամարեմ ու տանարացնեմ անոնց հոգիները:

Յաւիտեան Քո՛ւկդ եմ, Տէր, տո՛ւր որ մարդկային միտքերուն անհասանելի քու սիրոյդ ամբողջական տարողութիւնը մանչնամ, հասկնամ եւ ապրիմ եւ քո՛ւ իմաստութեամբդ լեցուր գիս, որպէսզի հասնիմ հաւատքի չափահասութեան՝ քու կատարեալ նմանութեանդ: Թող քեզի համար պատրաստ եւ ընտիր անօթ մը ըլլամ եւ իմ խորհուրդներս, խօսքերս ու գործերս միայն ու միայն ծառայեն կամէ՛դ կատարելու եւ քեզ փառաբանելու, Հօրք եւ Սուրբ Հոգիին հետ միասին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԱԿԻ ԳԻՐՔԵՆ

54.1-13

Ուրախացիր, Երուսաղէմ, դու՛ն՝ ամուլդ, որ չէիր ծնաներ. ցնծութեամբ երգէ՛ եւ աղաղակէ՛: Դու՛ն որ չէիր երկներ, որովհետեւ դու՛ն, ամուլթեան պատճառով լքուածդ աւելի շատ գաւակ պիտի ունենաս քան ամուսին ունեցողը,- կ'ըսէ Տէրը: Ընդարձակէ՛ վրանիդ տարածութիւնը, ընդլայնէ՛ պատերը, տեղ մի՛ խնայեր. չուանները երկարէ՛, ցիցերը ամրացու՛ր, որովհետեւ ամէն ուղղութեամբ պիտի տարածուիս շուտով, քու սերունդդ ազգերու պիտի տիրէ եւ անոնց լքած քաղաքները պիտի շինէ ու լեցնէ:

Մի՛ վախնար, այլեւս ամօթով պիտի չմնաս. մի՛ ամչնար, այլեւս պիտի չնախատուիս. ամուլթեանդ յաւիտենական ամօթը պիտի մոռնաս, այրիութեանդ նախատինքը բնաւ պիտի չյիշես, որովհետեւ Ստեղծիչդ քեզի ամուսին պիտի ըլլայ. Ան՝ որուն անունն է՝ ԵՐԿՆԱՅԻՆ ԶՕՐՔԵՐՈՒ ՏԷՐ, Իսրայէլի սուրբ Աստուածը՝ որ պիտի փրկէ քեզ եւ ամբողջ աշխարհին ալ Աստուածը պիտի կոչուի:

Լքուած եւ վշտահար կին մը չէի՞ր, կամ մերժուած նորահարս մը չէի՞ր, երբ Տէրը քեզ կանչեց: Արդ, Աստուած կ'ըսէ. «Թէեւ կարճ ժամանակ մը քեզ լքեցի, բայց ողորմութեամբ եւ սիրով քեզ պիտի ընդունիմ: Բարկութեան պահուն կարճ ատեն մը երես դարձուցի քեզմէ, բայց յաւիտենական սիրովս պիտի զթամ քեզի,- կ'ըսէ Տէրը, փրկիչդ:

«Ինչպէս ժամանակին ջրհեղեղէն ետք Նոյին երդում ըրի՝ այլեւս բնաւ երկիրը չպատժել ջրհեղեղով, նոյնպէս ալ հիմա կ'երդնում որ բարկութեամբս պիտի չպատժեմ քեզ:

Լեռները կրնան կորսուիլ եւ բլուրները չքանալ, բայց ողորմութիւնս անպակաս պիտի ըլլայ քու վրայէդ, խաղաղութեան ուխտս անսասան պիտի մնայ,- կ'ըսէ ողորմած Տէրը:

Ո՛վ Երուսաղէմ, փոթորիկէն զարնուած անմխիթար տառապեալ, հաշտութիւն պիտի ընեմ հետդ, որպէսզի մխիթարուիս. ահա ես քու հիմերդ շափիւղայ քարերով պիտի դնեմ, պատերդ՝ կարկեհան քարերով, աշտարակներդ՝ կարմիր յակինթներով պիտի կանգնեմ, դռներդ՝ բլրեղէ, եւ շուրջդ պարիսպ պիտի քաշեմ ընտիր եւ թանկագին քարերով: Բոլոր որդիներդ Աստուծմէ ուսած պիտի ըլլան, գաւակներդ մնայուն խաղաղութիւն պիտի վայելեն, եւ դու՛ն արդարութեան մէջ պիտի հաստատուիս»:

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ
ՆԱՄԱԿԸ ՏԻՍՈՒԹԵՈՍԻՆ**

1.1-11

Ես՝ Պօղոս, որ Քրիստոս Յիսուսի առաքեալն եմ՝ մեր փրկիչ Աստուծոյ եւ մեր յոյսը եղող Քրիստոս Յիսուսի հրամանով, քեզի կը գրեմ, հաւատքի հարազատ որդիս, Տիմոթէոս: Թող Հայրն Աստուած եւ մեր Տէրը Քրիստոս Յիսուս՝ շնորհք, ողորմութիւն եւ խաղաղութիւն պարգեւեն քեզի:

Երբ Մակեդոնիա կ'երթայի, ինդրեցի որ Եփեսոս մնաս եւ խօսիս քանի մը հոգիներու, որպէսզի դադրին օտար վարդապետութիւններ ուսուցանելէ եւ չզբաղին սկիզբ ու վերջ չունեցող առասպելներով եւ ազգահամարներով, որոնք վէճերու դուռ կը բանան, փոխանակ օգնելու մարդոց հաւատքին եւ Աստուծոյ ծրագրին իրականացման: Գերագոյն պատուիրանը սէրն է. անարատ սրտէ, մաքուր խղճմտանքէ եւ անկեղծ հաւատքէն բխած սէրը: Շատեր այս պատուէրները մոռցած, դատարկ վիճաբանութեանց մէջ մտնելով՝ մեզի Օրէնք սորվեցնելու ելեր են, մինչդեռ ոչ իրենց խօսածը գիտեն, ոչ ալ Աստուծոյ Օրէնքը, որուն մասին այնքան վստահութեամբ կը ճառեն: